

Տառերի գիւտի 1500-ամեայ եւ սպագրութեան 400-ամեայ
Մեծ յօբելեանի բացման հանդէսը ս. Էջմիածնում
եւ Օճականում.

Նորին Վեհափառութիւն Տ. Տ. Գէորգ Ե. Կաթողիկոսի
բարձր հովանաւորութեամբ եւ թոյլտուութեամբ կազմուած
Էջմիածնի յօբելեանական յանձնաժողովը նախօրօք ծրագիր
էր մշակել եւ ուղարկել բոլոր հայաշատ կենդրոնները, թէ ինչ
ձևով պէտք է սկսել եւ կատարել քաղաքակրթութեան այդ
մեծ տօնը: Ս. Էջմիածնում այդ մեծ յօբելեանի բացման
նախատօնակը սկսուեց ուրբաթ օրը, հոկտեմբերի 12-ին,
երեկոյեան: Այդ օրը Նորին Վեհափառութիւնը հանդիսաւոր
Թափօրով իջաւ Մայր Տաճար, ուր տեղի ունեցաւ նախա-
տօնակ ս. Թարգմանչաց յիշատակին:

Հետեւեալ օրը հանդիսավայրը Օշական զիւղն էր հա-
մաձայն ծրագրի. նախօրօք Վաղարշապատի բոլոր կառքերը
վարձուած էին միաբանութեան եւ պաազամաւորների հա-
մար: Բնութիւնն էլ կարծես ուրախ էր հայ ժողովրդի հետ
այդ օրուայ մեծ հանդիսի առթիւ. ամբողջ շաբաթուայ
ընթացքում համարեա անընդհատ տեղաշարժ անձրեւները
ուրբաթ կէսօրից յետոյ դադարել էին, իսկ շաբաթ օրը
սքանչելի եղանակ էր: Արարատեան դաշտի հիանալի աշ-
նանային օրերից մէկն էր: Ամբողջ 12 վերստ ճանապարհի
տարածութեան վերայ՝ Վաղարշապատից մինչև Օշական,
երեւում էին Օշական գնացողների խմբեր կամ ոտքով կամ
կառքերով:

Ժամը մօտ 10-ին Օշականի սահմաններում երևացին
կառքերի մի անվերջ շարան, որոնք ուղեկցում էին Նորին
Վեհափառութեանը. հանդիսաւոր գնացքի առաջընթացն
էր ոստիկանութեան ներկայացուցիչը, ապա գալիս էին
կարմրագգեստ շաթիրների եւ խաչ ու գաւազանակիր վար-
դապետների կառքերը, որից յետոյ՝ Նորին Վեհափառու-
թեան փակ կառքը՝ շրջապատուած պահակների խմբով:

ապա դալիս էին միաբանութեան անդամների, հասարակութեան զանազան խաւերի ներկայացուցիչների և մասնաւոր մարդկանց կառքերը: Գեղեցիկ տեսարան էր ներկայացնում Օշականը այդ ժամին. բարձր տների կտուրներին, փողոցներում խմբուած ժողովրդեան աչքերը յառած էին դէպի Օշականի ձորի ոլորապտոյտ ճանապարհը, որտեղով անցնելու էր Նորին Վեհափառութեան հանդիսաւոր զնացքը: Նորին Վեհափառութիւնն անցնելով պատմական ճանապարհով, այն ճանապարհով, որով երեւի անցել է հնումն ս. Մեսրոպի դադաղը, անցնելով Քասախի կամրջով և այն ջրաղացի մօտով, ուր, ըստ աւանդութեան, Մովսէս Խորենացին ջրաղացականութիւն է արել, բազմաթիւ ժողովրդի ուռանների և կեցցէների աղաղակների տակ կանգ առաւ եկեղեցու ցանկապատի դռան առջև. այստեղ Վեհը ամպհովանու տակ մտաւ և «Հրաշափառ Աստուած» շարականի քաղցր հնչիւնների տակ յամրաքայլ ընթացաւ դէպի եկեղեցի միաբանութեան ուղեկցութեամբ: Վեհափառի ամպհովանին բռնել էին այս անգամ Օշականի հասարակութիւնից ընտրուած պատուաւոր անձինք, պատգամաւորները գալիս էին Վեհափառի յետևից, իսկ սրանց հետևում էր խուռն բազմութիւն: Եկեղեցում ըստ պատշաճի աղօթքները կարդալուց յետոյ Վեհը անցաւ տեղական ծխական դպրոցի շինութեան մէջ պատրաստուած առանձնասենեակը հանգստանալու, իսկ եկեղեցում սկսուեց պատարաքը, պատարազիչն էր Խորէն եպիսկոպոսը. երգում էր ճեմարանի քառաձայն խումբը ուսուցիչ Ռուբէն արեղայի ղեկավարութեամբ, եկեղեցի մտնելու հնարաւորութիւն չկար, եկեղեցու բակն էլ լիքն էր ժողովրդով:

«Ողջոյնից» յետոյ միաբանութիւնը զոյգ-զոյգ մտաւ այն խորանը, ուր գտնւում է ս. Մեսրոպ Մաշտոցի շիրիմը երկրպագելու, սրանցից յետոյ մտաւ ինքը Վեհափառը, ապա պատգամաւորներն և մասնաւոր մարդիկ: Պատարազից յետոյ կատարուեց հայրապետական մաղթանք, որից յետոյ եկեղեցու բակում, դպրոցի շինութեան առաջը Նորին Վեհափառութեան ներկայութեամբ բացուեց տօնի հանգէսը:

Ս. Թարգմանչաց շարականը՝ «Նմանեալ Մովսիսի» երգելուց յետոյ Վեհափառ Հայրապետը գիմեց ժողովրդին հետեւեալ խօսքերով.

«Օշականցիք, թէև ձեր զիւղը մի փոքրիկ զիւղ է, սակայն ունի մի այնպիսի յիշատակարան, որ շատ մեծ քաղաքների համար փափազելի պիտի լինէր. շատ քաղաքներ նախանձում են ձեզ, որ այս դամբարանը իրենց մէջ չէ, ինչպէս եօթ քաղաքներ վիճում էին, թէ Հոմերոսը իրենց մէջն է ծնուած:

Ս. յսօր տօնում ենք մի ազգային-եկեղեցական տօն՝ Հայոց տառերի զիւտի 1500 ամեայ և տպագրութեան 400 ամեայ միացեալ յօբելեանը. այդ զիւտերով ս. Մեսրոպը և տպագրութեան մեր մէջ սկիզբ դնողը վերածնեցին մեզ հոգեպ ս և մտաւորապէս. և մեր ինքնուրոյն հոգևոր մտաւոր կեանքի հիմնաքարը դրեցին. մինչ այդ մենք օտար զրբերով և լեզուով էինք կատարում մեր եկեղեցու պաշտամունքը, որովհետև մենք սեփական զիր չունէինք. ուրեմն տեսէք ինչպիսի մեծ բարիքի են մասնակից արել մեզ մեր սուրբ հայրերը. մենք միշտ երախտապարտ պիտի մնանք մեր մեծ վարդապետներին, քանի որ նրանց շնորհիւ է, որ ունինք զրականութիւն և ազգային մտքի ու հոգու զանազանատեսակ զանձեր: Խօնարհուելով նրանց մեծ գործի առաջ, խօնարհուելով նրանց ս. շիրիմների և անունների առաջ միահամուռ կատարենք այս մեծ տօնը:

Օշականցիք, ձեզ վերայ պարտք կգնենք, որ ժողովէք ս. Մեսրոպի լուման և մի գեղեցիկ յուշարձան-գպրոց կանգնեցէք նրա գերեզմանից ոչ հեռու այս խալխուլ շիրիմեան փոխարէն. թէև Մենք հրաւեր ենք կարդացել այս մեծ յօբելեանի առթիւ հիմնել գպրոցական Ֆօնդ, բայց եթէ ամեն մի հասարակութիւն ինքը չմտածէ ապահովել իւր գպրոցը, ապա գպրոցական Ֆօնդը շատ քիչ բան կարող է անել: Հայեր, զարթեցէք ձեր թմրութիւնից և ապահովեցէք ձեր գպրոցական գործը, որով ամենից լաւ յարգած կլինէք ս. Մեսրոպի մեզ թողած յիշատակը: Վերստին հրաւիրում եմ, Օշականցիք, ձեր ուշադրութիւնը

այս զպրոցի վերայ, ապահովեցէք ձեր զպրոցը, շինէք մի օրինաւոր շէնք, որպէսզի եկող տարի այս ժամանակ, երբ կրկին այցելութեան կգանք ս. Մեսրոպի գերեզմանին՝ մեր սիրան էլ ուրախանայ, տեսնելով յարգուած մեր մեծ վարդապետի մեծ յիշատակը, մեծ գիւտը, մեծ յօբելանքը. ես էլ իմ կարեաց չափով կօղնեմ գլուխ բերելու այդ հանրագուտ հիմնարկութեան գործը մեր մեծ, հանճարեղ Վարդապետի գերեզմանի մօտ»։ Վեհափառ խօսքերից յետոյ ճեմարանի քառաձայն խումբը երգեց «Տէր կեցող Հայս» երգը՝ որ լսուեց ոտնկայս։ Ապա ամբիոն բարձացաւ ճեմարանի ուսուցիչ պ. Ստեփան Կանայեան, որը խօսքը ուղղելով Վեհափառ Հայրապետին և ժողովրդին՝ տասց մօտաւորապէս հետեւեալը. «Այսօրուայ տօնը հաղուադիւտ տօն է. առաջին անգամն է, որ հայը սրտի մի առանձին գոհունակութեամբ կարող է 1500 տարի դէպի յետ նայել և հրճուել։ Ով եղել է քաղաքակիրթ երկրներում, նա անշուշտ տեսած կլինի նրանց հանդէսները, նոքա յաղթական են, քաղաքական բնոյթ ունին. մեր այսօրուայ տօնը տարբեր է. սա քաղաքակիրթութեան, մտքի, գրի տօնն է. այսօր մենք տօնւմ ենք զրեբի գիւտի 1500 ամեակը և տպագրութեան 400 ամեակը»։ Պ. Կանայեանցի բանախօսութիւնից յետոյ Սշականի երկսեռ զպրոցի երկձայն խումբը երգեց «ով Հայոց Աստուած». ապա խօսեց բաւական կարճ, բայց ուժգին թափով պ. Ս. Թորոսեանը, յայտնելով այն միտքը, թէ հայ ազգի ճակատագիրն է, որ նա իւր մեծ տօներին անգամ չի կարողանում միահամուռ հանդէս դալ. մինչ մենք, ասաց նա, հաւաքուած ենք տօնելու այս երկու պանծալի միացեալ մեծ յօբելանները, սահմանի միւս կողմում մեր մեծ հատուածը սարսափի մէջ է, չունի իւր ստուար ներկայացուցչութիւնը. համարելով այդ պատմութիւնից մեզ բաժին ընկած մի փիճակ, ճառախօսը այնուհետեւ այն միտքը յայտնեց, որ մենք, որ մի բուռն ժողովուրդ ենք, յոյս ունենք, որ չենք կորչի, քանի որ ունինք 1500 ամեայ և տւելի անցեալ, գրական անցեալ, ունինք կենդանի լեզու, պատմութիւն, փառաւոր անցեալ,

ման աւանդ որ ազգերի կենսունակութեան և յարատեւութեան գաղտնիքը քան կի մէջ չէ, այլ որակի և բազմութիւ կուլտուրական ձեռն լինելի, որոն հիմքը դրուել է 1500 տարի առաջ մեր մեծ վարդապետների և սուրբ հայրերի ձեռքով. օրհնեալ լինի նրանց անմ հ յիշատակը, յարգանք նրանց մեծ գիւտին: Ճառախօսին ժողովուրդը վարձադրեց բռնոն և ցնծազին ծափահարութիւններով, որից յետոյ Օշականի խումբը երգեց «սարերի հովին մեռնեմ» ժողովրդական երգը: Այնուհետեւ Քարեզին վ. Յովսէփեանը մի գեղեցիկ բովանդակալից և շնորհալի ճառով մեծ յօբելեանը շնորհաւորեց «Աղբիւր» — «Տարազ»ի խմբագրութեան և Բարեյ. ընկերութեան Վաղարշապատի մասնաճիւղի կողմից. իսկ Ա. Քալանթար շնորհաւորեց «Մշակ»ի խմբագրութեան, Տփլիս քաղաքի հայ հասարակութեան մի մեծ հատուածի, Կ. Պօլսի Միացեալ ընկերութիւնների և Թիֆլիսի հայ գիւղատնտեսական և տնայնագործական ընկերութիւնների կողմից. իմ առաջին խօսքը, ասաց նա, պիտի լինի գոչել յաւերժ յիշատակ ս. Մեսրոպ Մաշտոցի անուանը. ս. Մեսրոպի անմահ յիշատակը մեզ բերել է այն անձի թանկագին շիրիմի մօտ, որ իւր գիւտով մի հրաշակերտ կոթող կանգնեցրեց գեղեցիկ գործի համար: Այսօր մեզ համար ամենաթանգ և սրբազան բաները՝ մատենագրութիւն, պատմագրութիւն, բանաստեղծութիւն, հայ գեղարուեստ և առհասարակ հայ ստեղծագործութիւնը արդիւնք են գրերի գիւտի, պահուել են գրերի և տպագրութեան միջոցաւ: 15 դար է անցել այն օրուանից և այսօր մենք, 20-րդ դարում գիտակից ենք, թէ որքան խոշոր և պատկառելի էր այն գործը, որ 15 դար առաջ եկաւ վերականգնելու հայ կեանքը և հային քաղաքակրթութեան ճանապարհի վերայ կանգնեցնելու: Այսօր ս. Մեսրոպի գիւտը մեզ վերայ մի սուրբ պարտականութիւն է դնում — տարածել նրա գիւտը ժողովրդի ամենալայն խաւերում, դարձնել սեփականութիւն բոլորի, ամեն մի անհատի և այդ պարտականութեան սրբազան զգացմունքով լցուած գոչենք՝ յաւերժ յիշատակ մեր սուրբ հայրերին:

Ուշ լինելու պատճառով շնորհաւորական հեռագրները ընթերցումը յետաձգուեց: Հանդէսը վերջացաւ ժ. 1¹/₂-ին: Կէս ժամուայ հանգստից յետոյ սկսուեց հանդիսաւոր ճաշ-կերոյթը, այդ օրուայ ճաշը պատրաստել էր Օշականի հասարակութիւնը ի պատիւ Վեհափառ Հայրապետի ու միաբանութեան և մեծ յօբելեանի առթիւ Օշական եկած պատգամաւորների և հիւրերի: Հիւրերը տեղաւորուած էին դպրոցի երկու մեծ սենեակներում: Հիւրերին պատուեց նորին Վեհափառութիւնը իւր ներկայութեամբ. ճաշի ընթացքում բանախօսեցին և կենացներ առաջարկեցին Հ. Առաքելեան, որը Վեհափառի կենացն առաջարկեց, այնուհետեւ էր. Շահազիզ, Կարապետ Եպիսկոպոս, Մեսրոպ վարդ, Մաքսուդեան, Կր. ա. քհ. Մանգալունին, Ա. Քալանթարը առաջարկեց թրքահայ և պարսկահայ եղբայրների կենացը, որոնք յայտնի պատճառով չեն կարողացել աւելի մեծ և անմիջական մասնակցութիւն ունենալ այս մեծ յօբելեանին: Սրանով վերջացաւ բաժակաճառերի շարքը, ինչպէս նաեւ ճաշը, ժամը 3¹/₂ էր. իսկ ժամը 4-ին Վեհափառը նոյն շքով մեկնեց դէպի Էջմիածին, նախօրօք նկարուելով հասարակութեան յօբելեանական հանդիսին մասնակցողների հետ: Նոյն օրը երեկոյեան Մայր Տաճարի բակում հրապարութիւն կար:

Հետեւեալ օրը՝ կիրակի վաղի Իջման սեղանի վերայ հանդիսաւոր պատարագ կար. պատարագիչն էր Սահակ արքեպ. Այվազեանը. պատարագից յետոյ Կաթողիկոսի գլխաւորութեամբ հոգեհանգիստ կատարուեց զրի և տպագրութեան վաստակաւորների յիշատակին. իսկ երեկոյեան ճեմարանում հանգէս կար. թէեւ հրաւիրուած էին միայն միաբանութիւնը, պատգամաւորներն, թեմական դպրոցների տեսուչներն ու ճեմարանի ուսուցիչներն իրենց ընտանիքներով, սակայն կարճ ժամանակուայ մէջ այնպիսի մեծ քանակութեամբ ժողովուրդ թափուեց ճեմարան, որ անհնարին դարձաւ սահմանափակուել հրաւիրեալներով և ներս թողնուեցին այնքան մարդ, որքան որ ճեմարանի դահլիճը կարող էր տանել: Նորին Վեհափառութիւնն ևս բարեհաճեց ներկայ գտնուել: Կրական-երաժշտական երե-

կոյթը բացեց Կաթուղիկոսը «Հայր մեր»-ով, ապա երգեցին «Նմանեալ Մովսիսի» շարականը, որից յետոյ ճեմարանի տեսուչ Բաղրատ վրդ. ամբիոն բարձրացաւ, որ՝ մի գեղեցիկ ճառով բացադրելով մեծ յօբելեանի նշանակութիւնը՝ յայտնեց վերջում, որ Վեհափառ Հայրապետը ս. Մեսրոպի մեծ գիւտը յաւերժացնելու համար Էջմիածնի միջոցներից յատկացրել է Գլխորդական Ֆօնդին 15,000 ռուբլի: Ապա պ. Ստ. Կանայեանցը կարդաց իւր բանասիրական աշխատութիւնից մի կտոր, թէ որանդ է ս. Մեսրոպի քարոզած Մարաց աշխարհը, իսկ յօբելեանական յանձնաժողովի անդամ պ. Գ. Ալթունեան յօբելեանի առթիւ ստացուած բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներից, ուղերձներից միայն մի քանիսը կարդալուց յետոյ բաւական երկար կանգ առաւ այն հարցի վերայ, թէ ինչո՞ւ Էջմիածնի յօբելեանական յանձնաժողովը որոշեց գերազասութիւն տալ Գլխորդական Ֆօնդին. հայ զրի և հայ զրքի 1500 ամեայ տօնն ենք կատարում, ասաց ճառասփօսը, բայց դժբախտաբար հայ զիրքը հայութեան ահադին մեծամասնութեան համար անհասկանալի է այսօր: Այսօրուայ մեծ յօբելեանը համազգային կըդառնայ յսկապէս այն տեղերում, ուր հայ զիրքը հայութեան բոլոր հատուածների և խաւերի մէջ հաւասար սիրով բնդունուի և հասկացուի: Ապա պ. Ալթունեան ցաւ յայտնեց, որ մեր հասարակութեան մի մասը տօնակատարութեան ժամանակի և տօնը յաւերժացնելու խնդրի մասին տարբեր կարծիքի լինելով, չի մասնակցել Հայոց քաղաքակրթութեան այս մեծ տօնի բացման հ նշխին: Ապա խօսեցին պարոնայք Ստեփան Մալխասեան, որ բացադրեց սուրբ Մեսրոպի տեօխըը տառերը դանելիս և Աղէքսանդր Քալանթար՝ «Տառերի գիւտը իբրեւ վերածնութեան դործօն» թեմայի մասին: Մէջ բնդ մէջ երգուեալ էր ճեմարանի քառածայն խումբը Ռուբէն արեղայի ղեկավարութեամբ: Հանդէսից յետոյ նորին Վեհափառութիւնը մեկնեց վեհաբան, պատգամաւորները, միաբանութեան մի քանի անդամներ, ճեմարանի և Վաղարշապատի ուսուցիչները և թեմական դպրոցների համար

ծրադիր-կանոնադրութիւն չափող յանձնաժողովի անդամները՝ կազմուած տեսուչներէից և ուսուցիչներէից՝ հանդէսից յետոյ հրաւիրուեցին թէյի և ընթրիքի ճեմարանի միւս դահլիճում։ Ընթրիքը անցաւ շատ ուրախ, առաջարկուեցին զանազան կենացներ, որոնք պտտուում էին օրուայ մեծ տօնի շուրջը։ Ընթրիքը վերջացաւ գիշերուայ ժամը 12-ին։

Ս. Ա. Հ.

1912 թ. 15 հոկտ.

Էջմիածին։

Մեծ յօբելեանի բացումը հեռագրերով և ուղերձներով հետեւեալ հաստատութիւններն ու առանձին անհատներն էին շնորհաւորել։

Ալեքսանդրապոլից. Թորքէնական յանձնաժողովի նախագահ Խաչվանքեան քահանայից։

Աղնախից. Քաղաքի բարեգործական ընկերութեան ճիւղի նախագահ Տէր Նիկողոսեան քահանայից։

Կասաբեան գործարաններից. Հայոց բարեգործական տեղական ճիւղի կողմից նախագահ Մելիք Ստեփանեան և քարաուղար Մելիք Արամեան։

Թիֆլիզից. Աւագ քահանայ Նիսեանց և հոգաբարձու Քիշմիշեան։

Աղնախից. Քաղաքի հայոց երկգասեան ուսումնարանի, հոգաբարձութեան և ուսուցչական մօբմի կողմից՝ Տէր Եղիշէ քահանան, հոգաբարձութեան նախագահ Ննիկոլոբեան, աւագ ուսուցիչ՝ Գայանոսեան։

Թիֆլիզից. Կրական գեղարուեստական սալոնում հաւաքուելով սալոնի յաճախորդները, նաև Թիֆլիզահայ ինտելլիգենցիան, այլ և ուսաներ և օտարերկրեայ գաղութների ներկայացուցիչներ շքեղ հանդիսով տօնեցին այսօրուայ մեծ յիշատակը և որոշեցին իրանց միահամուռ շնորհաւորութիւններն ու որդիական ակնածութիւնը բերել նորին Սրբութեան

Վեհափառ Կաթողիկոսին: — Պատուաւոր նախա-
գահ Գէորգ Բարխուդարեան, Նաւասարդեան,
տնօրէն սալոնի նաղարեան:

Բագու. Բաղուի կուլտուրական միութեան հրատարակչա-
կան ճիւղի նախաձեռնութեամբ կազմակերուած
յոբելենական յանձնաժողովը այսօր աղղային-
կուլտուրական մեծ յոբելեանը տօնում է զրա-
կան-երաժշտական երեկոյթով և որդիական աւի-
նածութեամբ հայցում է Նորին Վեհափառու-
թեան հայրական օրհնութիւնը: Թող լիակատար
յաջողութեամբ պսակուի բարի սկզբնաւորումը
այդ մեծ տօնի ի բարգաւաճումն ժողովրդի կրօ-
նական բարոյական կրթութեան:

Թիֆլիզից. Քաղաքի հայ հոգևորականութեան կողմից. —
ստորագրել են քահանաները:

Թիֆլիզից. Կովկասի Հայոց բարեգործական ընկերութիւնը
հայոց զրեբի 1500-ամեակի և տպագրութեան
400-ամեակի առթիւ անկեղծօրէն ցանկանում է
աղղային զրականութեան և քաղաքակրթութեան
ապագայ բարգաւաճումը: Խորհրդի նախագահ Գա-
րութիւնեան:

Թիֆլիզից. Կոնսիստորիայի ծառայողների կողմից — ստո-
րագրել են Վարդաղարով, Այմազեանց, Յովհան-
նիսեանց, Պոպովեանց, Եարալեանց, Շիտեանց:

Թիֆլիզից. Հայոց կոնսիստորիայի կողմից - աւագ քահանայ
Տէր Յովհաննէս, աւագ քահանայ Տէր Համա-
դասպ, աւագ քահանայ Շիտեանց:

Բագուից. Աղօթող բաղնիքի կողմից — Դրիկորեան քհն.

Մոսկվայից. Մոսկվայի Հայոց եկեղեցիների խորհուրդը
հրճուանքը և ուրախութեան բուռն զգացմուն-
քով միանալով էջմիածնի ընդհանուր Հայկական
մօթի և աղղային կուլտուրայի ծաղկման դարե-
շրջանի այդ մեծ Յոբելեանի հանդէսներին, շնոր-
հաւորում է Նորին Սրբութեան Ամենայն Հայոց
Կաթողիկոսին և նրա ամբողջ հօտը յոբելենական

և կատարեալ յաջողութիւն է ցանկանում, Կենդ-
րոնական Յանձնաժողովի բոլոր բարի ձեռնարկու-
թիւններին, որոնք ուղղուած կըլինին Հայ դպրոցի
և գրականութեան յետադայ զարգացման և բար-
դաւաճման: Յանկանալով միեւնոյն ժամանակ, որ
այդ մեծ յօրելեանը արձագանգ գտնի Հայութեան
բոլոր վայրերում, խորհուրդն յայտնում է իւր
պատրաստակամութիւնը և ոչ պակաս կոչուած է
զգում օգնելու Յոբէյեն կան Յանձնաժողովի գա-
մեն բանով, ինչ որ կօգնեն մեր միւս ազգային
Հաստատութիւնները. նախագահող՝ Ստեփան Տէր
Սարգսեան:

Նոր-Քալազէից. Արտակ վարդապետը քաղաքի ամբողջ
Հոգեւորական դասի և ժողովրդի կողմից շնորհա-
ւորում է յօրելեանական տարուայ բացման հան-
դէսը:

Պետերբուրգ. Բախտաւոր ենք Ձերդ Արքութեան շնորհաւո-
րելու այդ համազգային մեծ տօնը, թող դա լինի
բազմաչարչար Հայ ժողովրդի կուլտուրական վե-
րածնութեան բախտաւոր սկիզբ, Պետերբուրգի
պոլիտեխնիկական ինստիտուտի մի խումբ Հայ
ուսանողներ:

Մոզդոկ. Հայոց դպրոցի մանկավարժական խորհրդի և հո-
գաբարձութեան կողմից—նախագահ Շիլտովը:

Սսուրապլ. Հայոց դպրոցի հոգաբարձական կազմի կողմից
Տէր Արրահամ Խեչոյեան, Տէր Յովհաննիսեան,
Տէր Յովհաննիսեան քահանայ:

Ղզլար. Ղզլարի Հայ կանանց ընկերութիւնից:

Ռումանովսկայեա. Հոգաբարձութեան և դպրոցի կողմից —
նախագահ Կայեալեան:

Շուշի. Քաղաքի ազգային բոլոր հաստատութիւնների և
խումուն բազմութեան ներկայութեամբ հանդեսնե-
րի մասին տեղեկացնելով շնորհաւորում է մեծ
յօրելեանը—եկեղեցիների աւագ քահանայ Յա-
րութիւն վարդապետեանը:

Թիֆլիզ. Երէկ՝ յորելենական հանդէսների առթիւ հայոց ծխական ուսումնարանների ամբողջ մանկավարժական կազմը աշակերտ աշակերտուհիների հետ միասին ներկայ էին վանքի մայր եկեղեցում հանդիսաւոր պատարագին—թեմական տեսուչ Տէր Միրաքեան:

Ղազախ. Երեկ և այսօր տօնելով յորելենական տարուայ բացումը իմ հօտը միանում է ազգային հանդէսներին. Ապրեսեան քահանայ:

Ախալցխա. Հոգևոր կառավարութեան կողմից—Կարապետ Տէր Մարտիրոսեան Մկրտիչ Դանցեջեան, Յարութիւն Գրիգորեան քահանաներ:

Երեւան. Սաղաթելեան շնորհաւորում է փառաւոր յորելեանը:

Ալեքսանդրապոլ. Հոգևոր կառավարութեան կողմից—նախագահ Խաչվանքեան քահանայ:

Ելինովկա (Սեւան). Սեանի միաբանութեան կողմից—վանահայր Սարգիս եպիսկոպոս:

Կուրա. Կուբայի հայոց հասարակութիւնը, հոգաբարձութիւնն ու մանկավարժական մարմինը:

Բազու. Հայկական բարեգործական ամենահին հիմնարկութիւնը կովկասում՝ Բազուի Հայոց մարդասիրական ընկերութեան խորհուրդը պատկառանքի ու ակնածութեան զգացմունքով խոնարհուելով ս. Սահակի և ս. Մեսրոբի սրբազան յիշատակի ինչպէս նաև հայ տպագրութեան առաջին փաստաւորների նուիրական անուան առաջ մաղթում է որ Հայկական ոսկեդարի զրականութիւնն ու քաղաքակրթութիւնը նորի նորոյ ծաղկի ու վերածնուի. նախագահ Միք. Պապաշանեան:

Տազանոզ. Հայկական եկեղեցու քահանայ Օկսենեանցից:

Բազու. Մայր եկեղեցու աւագ քահանայ Գրիգորեանից:

Կայիրէ. Հայկական միութիւնը սրտագինս շնորհաւորում է հայկական զրականութեան փառաւոր յորելեանը. նուբար:

Գորիս. Զանգեզուրի շրջանի բոլոր եկեղեցիների կողմից —
կառավարութեան նախագահ Կարեգին քահանայ:

Գորիս. Զանգեզուրի հոգևորականութեան կողմից — Կարե-
գին քահանայ:

Երեւան. Քաղաքի մայր եկեղեցում պատարագ է եղել բո-
լոր զպրոցական հաստատութիւնների մանկավար-
ժական խմբերի, սովորողների ներկայութեամբ:
Հեռագրել է Երեւան քաղաքի հայոց եկեղեցիների
գործակալ Սիմէոն քահանայ Արքահամանց:

Երեւան. Նոյն բովանդակութեամբ կոնսիստորիայի նախան-
դամ Տէր Կարեգին քահանայի կողմից:

Երեւան. Քաղաքի բոլոր ծխական զպրոցներում կատարուել
է ազգային մեծ յօբելեանի բացումը. այդ մասին
հեռագրում է Երեւանեան թեմի ծխական զպրոց-
ների թեմական տեսուչ Ռաշմաճեան:

Մոսկվա. Արևելեան լեզուների Լազարեան ճեմարանը մի-
անալով հայոց գրականութեան նշանակալից հան-
դիսին յարգանք ցանկանում է հայոց գրի և
զպրութեան յետագայ բարգաւաճումը. զիրեկտոր
Գրիգուլեանով, ինսպեկտոր Կոստանեան:

Գանձալ. Քաղաքի հոգևորականութեան, հաստիակութեան
և սովորող աշակերտութեան կողմից շնորհաւո-
րում է յաջորդ Լևոն վարդապետը:

Աստրախան. Հայոց սեմինարիայի հոգաբարձութիւնը ող-
ջունում է հայ գրերի 1500-ամեակը և հայկա-
կան տպագրութեան 400-ամեայ մեծ յօբելեանը:
Նրա բուն ցանկութիւնն է, որ ազգային մտքի
այդ արշալոյսի յետևից երևացող գիտութեան և
գրականութեան արևը այնքան ուժ կարողանայ
հանդէս բերել, որ գիտութիւնը տանի ժողովր-
դական կեանքի ամենահեռուոր խորքերը: Հոգա-
բարձութիւն:

Աստրախան. Հայոց ազգատախտմ ընկերութեան հոգա-
բարձութիւնը նոյն ցանկութիւնն է յայտնում:

Սրվա. Սրտանց շնորհաւորութիւններ հայոց գրականու-

Թեան մեծ տօնի առթիւ. Սանասարեանի տեսուչ
Նոկուրեան:

Նախիջևան. Հայոց հոգևոր կառավարութեան կողմից—
անդամ Իսահակ քահանայ Թադէոսեանց, քար-
տուղար Գրիգոր Խաչատրեանց:

Կայիրէ. Կրկին յօբելեանների փառաւոր հանդէսը շնորհա-
ւորում է Կայիրէի հայ զաւրութիւնը:

Բացի այդ հեռագիրներից կային և մի քանի ուղերձ-
ներ և նամակով շնորհաւորութիւններ, որոնցից առաջ կը-
բերենք Բրիտանական և Արտասահմանեան բիրլիական ըն-
կերութեան գրութիւնը յանուն Ամենայն Հայոց Կաթողի-
կոսի. «Բիրլիական ընկերութիւնը թոյլ է տալիս իրեն հայ
ժողովրդին տրտայայտելու իւր ամենասրտագին շնորհակա-
լութիւնները Հայոց այբուբենի 1500-ամեակի և Հայկական
տպագրութեան 400-ամեայ կրկնակի յօբելեանի առթիւ:
Ընկերութիւնս յոյս է տածում որ այդ մեծ յիշատակների
տօնակատարութիւնը սուրբ Գրքի Թարգմանիչ հայրերի
տօնի օրը արժանավայել մի գէպք կըլինի կատարելու հայ
ժողովրդի յոյսերը—տեսնել սուրբ Գիրքը աշխարհաբար
հայերէնով Թարգմանուած և հայ եկեղեցու կողմից ըն-
դունուած»... Ստորագրել է աստուածաբանութեան զոկտոր-
պատոր Վ. Վ. Կին:

Յօբելեանական յանձնաժողովին ուղղած յատուկ գրու-
թեամբ պ. Տ. Նազարեանը յայտնում է, որ «Աղբիւրի»,
«Տարազի» և Գրական Գեղարուեստական Սալոնի կողմից
ներկայացուցիչներ են նշանակուած Տ. Յուսիկ արքեպիսկ.
Բաբգէն, Գարեգին վարդապետները պ. պ. Կանայեան Ս.
և Պետրոսեան Յ.:

Ծիթեհայք զիւղի դպրոցի հոգաբարձութեան կողմից
ներկայացուցիչ էր եկել Գրիգոր քհն. Տէր Գրիգորեանը:

«Ախուրեան» օրաթերթի կողմից ներկայացուցիչ էր նոյն
Գրիգոր քհն. Տէր Գրիգորեանը:

Հառիճի դպրոցի հոգաբարձութիւնը յատուկ գրու-
թեամբ յանուն Վեհափառ Կաթողիկոսի խնդրել էր Տ. Սու-

քիսս ա. քեպ. Պարզեանին ներկայացուցիչ լինելու համազգային յորելեանին:

Ղզլարի հոգաբարձութեան և ուսուցչական մարմնի կողմից ներկայացուցիչ էր կարգուած Տ. Յուսիկ վարդապետը:

Ախալքալաքի հայոց բարեգործական ընկերութեան ճիւղի վարչութիւնը յատուկ հեռադրով պատգամաւոր էր ընտրել պ. Գէորգ Ալթունեանին:

Թիֆլիզի հայ հասարակութեան մի հատուածի կողմից եկել էին պ. պ. Քալանթար և Առաքելեան Հ.:

Հայոց զիւղատնտեսութեան ընկերութեան կողմից պ. Քալանթար:

«Մշակ» լրագրի կողմից — պ. պ. Քալանթար և Առաքելեան:

«Արօր» ամսագրի կողմից — պ. Առաքելեան:

Յովնանեան զպրոցի կողմից տեսուչ պ. Մալխասեան:

Պօլսի հայոց միացեալ ընկերութեան կողմից Տէր Յուսիկ վարդապետ և պ. պ. Քալանթար և Առաքելեան:

Պօլսի հայոց ազգային ժողովի կենդրոնական վարչութեան կողմից պ. Մալխասեան:

Եզիպտոսի հայոց ընկերութեան միութեան կողմից պ. Առաքելեան:

Թիֆլիզի հայ վաճառականութեան կողմից պ. Սուրխանեան:

Թիֆլիզի հայոց քահանայութեան կողմից Տ. Գրիգոր քհնյ. Մանդակունի:

Մոռացանք գրելու, որ Դուշէթի հայոց եկեղեցական ծխական զպրոցի ուսուցչական խումբը յատուկ ուղերձով շնորհաւորում է համազգային մեծ յորելեանը: